

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/6

17 մարտի 2015 թ.

Քննարկվեց «Լեգենդա» ՍՊԸ 24.02.2015 թ-ի թիվ 01/75 գանգատը ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՏՏ 17.02.2015 թ-ի թիվ 1010169 ակտի դեմ:

#### **«Լեգենդա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

17.02.2015 թ-ի թիվ 1010169 ակտն Արմավիրի ՏՏՏ-ի աշխատակիցների կողմից կազմվել է օրենքի խախտմամբ և այն ամբողջությամբ չի ընդունվում հետևյալ հիմքերով.

17.02.2015 թ-ի թիվ 1010169 ակտի շահութահարկի բաժնում հղում է կատարված ՀՀ կառավարության 28.08.2008թ. թիվ 1101-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի 6-րդ կետի 13-րդ ենթակետին, որի համաձայն՝ Լիցքավորման բաշխիչ աշտարակ. աշտարակ՝ ավտոգազավառելիքի կարգավորվող լիցքավորման համար, չափում է մեքենաներ լիցքավորվող գազի իրական զանգվածը կամ ծավալը, ճնշումը, ջերմաստիճանը և խտությունը, հաշվարկում է լիցքավորված գազի արժեքը: Վահանակի վրա պետք է արտացոլվի չափման միավորի արժեքը (զանգված կամ ծավալ, կգ կամ մ<sup>3</sup>), լիցքավորված գազի քանակը (զանգված կամ ծավալ, կգ կամ մ<sup>3</sup>) և արժեքը: Լիցքավորումը ղեկավարվում է օպերատորի կողմից՝ համակարգչի միջոցով: Լիցքավորվող գազի զանգվածի թույլատրելի սխալանքը պետք է համապատասխանի արտադրող գործարանի փաստաթղթերին, բայց չի կարող գերազանցել +/-1,0 % սահմանը./, մասնակի և մեկնաբանվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 86-ի պահանջների խախտմամբ: ՀՀ կառավարության 28.08.2008թ. թիվ 1101-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի 6-րդ կետի 13-րդ ենթակետում նշում չկա ակտի հաշվարկների հիմք ընդունված գումարային որևէ հաշվիչի մասին: Ստուգողների կողմից անտեսվել է թիվ 1101-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի 6-րդ կետի 13-րդ ենթակետով ամրագրված այն հանգամանքը, որ լիցքավորումը ղեկավարվում է օպերատորի կողմից՝ համակարգչի միջոցով: Վերջինիս կողմից համակարգչից ամփոփվում է գազի լիցքավորումը մանրաձախ իրացումն արտացոլվում է ՀԴՄ ապարատների միջոցով, իսկ մեծաձախ իրացումը՝ հարկային հաշիվներով: Յուրաքանչյուր ամսվա վերջում կազմվել է փաստացի իրացված գազի ծավալների և արժեքի վերաբերյալ համապատասխան ակտ և արտացոլվել հաշվետվություններում:

17.02.2015թ. թիվ 1010169 ակտով կատարված հաշվարկները ստուգողները կատարել են հիմք ընդունելով Չափագիտական ազգային ինստիտուտի կողմից տրված 4 բաշխիչ աշտարակների ստուգաչափմամբ համապատասխան վկայականների, որոնք կազմված են ՀՀ էկոնոմիկայի նախարարի 14 փետրվարի 2013թ. թիվ 104-Ն հրամանով, ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21 մարտի 2013թ. թիվ 10313102 պետական գրանցում ստացած ստուգաչափման կազմակերպման և իրականացման կարգի խախտմամբ, այն է՝ հաշվիչի գումարային տվյալները չի վերաբերվում ստուգաչափման աշխատանքներին: Խախտվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված 2-րդ կետի պահանջը:

1. ԱԳԼՃԿ-ն իրացվող գազը ստանում է Հայրուսգազարդի կապարակնքված հաշվիչով, յուրաքանչյուր ամիս ստացվող գազի հաշվիչի տվյալները համեմատվել են փաստացի իրացված գազի ծավալների հետ, տարբերություններ չեն հայտնաբերվել: Ստացվում է, որ 2013թ. առաջադրված տարբերության չափով ԱԳԼՃԿ-ում ավել գազ է վաճառվել, քան

ստացվել է մուտքի կապարակնքված հաշվիչով, որը հնարավոր չէ և չի ապացուցվում ստուգողների կողմից:

2. Հղում կատարելով ՀՀ կառավարության 28.08.2008թ. թիվ 1101-Ն որոշման 6-րդ կետի 13-րդ ենթակետին և եզրակացնել, որ բաշխիչ աշտարակների հաշվիչների ցուցմունքների հանրագումարը ամբողջությամբ արտացոլում է փաստացի իրացված գազի ծավալները, անհիմն է: Իրականում այն արտացոլում է բաշխիչ աշտարակների մատակարարման և բաշխման փողորակով կատարվող բոլոր տեսակի հոսքերը, որոնց մի մասը չի հանդիսանում իրացված գազ:

2.1 Յուրաքանչյուր անսարքությունների վերացման դեպքում, ԱԳԼՃԿ-ի համակարգի հանգույցների պարունակությունը դատարկվում է մատակարարման և բաշխման փողորակներով, քանի որ ճնշման տակ չեն կարող ի հայտ եկած թերությունների վերացման աշխատանքներ կատարել:

2.2 Փողորակների կից հանգույցների, երբեմն լիցքավորվող մեքենաների լիցքավորման հանգույցների անսարքության հետևանքով առաջացած հոսքերը նույնպես արտացոլում են գտնում բաշխիչ աշտարակների հաշվիչներում, որոնք իրենցից ներկայացնում են կորուստներ:

3. ԱԳԼՃԿ-ի հանգույցները կեղտոտվում են յուղային և մի շարք այլ թափոններով, որոնց մաքրման համար յուրաքանչյուր 15 օրը մեկ կոմպրեսորի միջոցով մղվող օդով մաքրվում են, որի արտահոսքը կատարվում է բաշխիչ աշտարակների բաշխման փողորակներով և արդյունքն արտացոլվում է ընդհանուր հաշվիչներում: Նշված բոլոր գործողությունների ժամանակ չի խախտվում բաշխիչ աշտարակների հաշվիչների պլոմբները և հաշվառված ցուցմունքները չեն հանդիսանում մեքենաների լիցքավորում, իրացված գազի ծավալ:

4. ՀՀ կառավարության վերոնշված որոշման նույն կետում ամրագրված է, որ լիցքավորվող գազի զանգվածը կարող է արտացոլվել սխալ +/- 1.0%-ի սահմաններում, որը հաշվարկներում արտացոլում չի գտել:

4.1 Ակտում կատարված հաշվարկների հիմք է հանդիսանում Չափագիտության ազգային ինստիտուտի կողմից 07.04.2014թ. չորս աշտարակների ստուգաչափմամբ տրված վկայականներում օրենքի խախտմամբ նշված հաշվիչների տվյալների հանրագումարը, որը ընկերության կողմից ստորագրված չէ և այդ մասին վերջինս տեղեկացել է ստուգողներից: Այն ամփոփում է բաշխիչ աշտարակների հաշվիչների աշխատանքի սկզբից մինչև 07.04.2014թ. բոլոր հոսքերի հանրագումարը: Չի պահանջվում և չկա օրական տվյալներով յուրաքանչյուր հաշվիչի հոսքերի վերաբերյալ հաշվառում:

Բաշխիչ աշտարակները սկզբնական շրջանում աշխատել են այլ տնտեսության տնօրինության ներքո տեղափոխվել են «Լեգենդա» ՍՊԸ, 01.04.2014թ-ից տեղափոխվել է «ԹԵՄ-ԱՐՄ-ԿԱՐ» ՍՊԸ մինչ 07.04.2014թ. որևէ ստուգմամբ չի համեմատվել գազի իրացման տվյալների հետ, հետևաբար նման պայմաններում անհիմն է որևէ տարբերություն վերագրել կոնկրետ 2013թ. հաշվետու ժամանակահատվածին, 07.04.2014 թ-ից կատարվող յուրաքանչյուր հետհաշվարկ կխեղաթյուրի գազի իրացման ծավալները հաշվետու ժամանակաշրջանների համար, կհանգեցնի ոչ իրական հարկային պարտավորությունների հաշվարկմանը:

Ակտի հաշվարկում հիմք ընդունված «ԹԵՄ-ԱՐՄ-ԿԱՐ» ՍՊԸ-ի տեղեկանքը վերաբերվում է միայն իրենց կողմից իրացված մեծածախ գազին և հաշվիչների մասին որևէ տեղեկություն չի պարունակում: Բաշխիչ աշտարակների հաշվիչներով հոսքերն հաշվարկելը ահեթաթություն է, հատկապես, որ «ԹԵՄ-ԱՐՄ-ԿԱՐ» ՍՊԸ-ն ավելացրել է աշտարակների թիվը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 20.03.2014թ. թիվ 101069 հանձնարարագրով ստուգման ժամանակահատված է սահմանված շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով մինչև 31.12.2013 թ-ը: Ստուգողները հաշվարկների հիմք են վերցրել, ստուգվող

ժամանակաշրջանից դուրս, «ԹԵՄ-ԱՐՄ-ԿԱՐ» ՍՊԸ-ում 07.04.2014թ. բաշխիչ աշտարակների արձանագրված տվյալները, որը հանդիսանում է ստուգման ժամանակահատվածի տվյալների ճշտման համար նոր հանգամանք, անհրաժեշտ է ճշտել ըստ հաշվետու ժամանակահատվածների հաշվիչների հոսքերի քանակները:

Չկիրառելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, 2014թ. հունվարից մինչև ապրիլի 7-ը ժամանակահատվածի տվյալներն արժանահավատ ճանաչելը, հաշվարկներում օգտագործելով ստուգվող ժամանակահատվածում առաջադրված պարտավորությունները ապացուցում են, որ վերցված տվյալները ստուգվել են ստուգողների կողմից, հետևաբար ակտը կազմվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի խախտմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընկերությունը խնդրում է ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ-ի 2015թ. փետրվարի 17-ի թիվ 1010169 ակտն ամբողջությամբ ճանաչել անվավեր:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 20.03.2014 թ-ի թիվ 1010169 հանձնարարագրի համաձայն «ԼԵԳԵՆՊԱ» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում, կազմվել է ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ 17.02.2015 թ-ի թիվ 1010169 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով շահութահարկի և ԱԱՀ-ի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 13.992.179 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ՀՀ կառավարության 28.08.2008 թ-ի թիվ 1101-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի 6-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ *լիցքավորման բաշխիչ աշտարակ*. աշտարակ՝ ավտոգազավառելիքի կարգավորվող լիցքավորման համար, չափում է մեքենաներ լիցքավորվող գազի իրական զանգվածը կամ ծավալը, ճնշումը, ջերմաստիճանը և խտությունը, հաշվարկում է լիցքավորված գազի արժեքը: Վահանակի վրա պետք է արտացոլվի չափման միավորի արժեքը (զանգված կամ ծավալ, կգ կամ մ3), լիցքավորված գազի քանակը (զանգված կամ ծավալ, կգ կամ մ3) և արժեքը: Հետևաբար ավտոտրանսպորտային միջոցների գազալցման այն կայաններում, որտեղ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված տեխնիկական կանոնակարգին համապատասխան տեղադրված են բաշխիչ աշտարակներ, գազի իրացման ծավալների հաշվարկման համար հիմք են ընդունվում բաշխիչ աշտարակների միջոցով փաստացի իրացված գազի ծավալների հանրագումարը:

Ընկերությանը պատկանող ԱԳԼԾԿ-ում Չափագիտության ազգային ինստիտուտի կողմից 15.04.2013 թ-ին կատարվել է 4 բաշխիչ աշտարակների ստուգաչափում և տրվել է համապատասխան վկայականներ, որոնց մեջ ներառված է նաև բաշխիչ աշտարակների գումարային հաշիվների ցուցմունքները, համապատասխանաբար՝ 32423 մ.խ., 408022 մ.խ., 341376 մ.խ. և 388963 մ.խ., ընդամենը 1462597 մ.խ.: Նույն բաշխիչ աշտարակների հաջորդ ստուգաչափումը կատարվել է 07.04.2014 թ-ին (03.04.2014 թ. բաժնետոմսերի գնման արդյունքում ԱԳԼԾԿ-ն անցել է «ԹԵՄ-Արմ-Կար» ՍՊԸ-ին) և գումարային հաշիվների ցուցմունքը կազմել է համապատասխանաբար՝ 786570 մ.խ., 697193 մ.խ., 844221 մ.խ. և 669215 մ.խ., ընդամենը 2997199 մ.խ.:

01.01.2013 թ-ից մինչև 15.04.2013 թ-ն ընկերությունն իրացրել է 439354 մ.խ. գազ: Կատարելով հետադարձ հաշվարկ ստացվում է, որ 01.01.2013 թ-ի դրությամբ բաշխիչ աշտարակների գումարային հաշվիչների ցուցմունքների հանրագումարը կկազմի 1023243 մ.խ.: Նման ձևով 01.01.2014 թ-ից մինչև 07.04.2014 թ. ներառյալ վաճառված գազի ծավալ է հաշվարկվել 316004 մ.խ. (01.01.2014 թ-ից մինչև 02.04.2014 թ. ներառյալ ըստ ներկայացված ամփոփ հաշվարկի 312004 մ.խ և 03.04.2014 թ-ից մինչև 07.04.2014 թ. ըստ «Թեմ-Արմ-Կար» ՍՊԸ-ի գրության գազի վաճառքը կազմել է 4000 մ.խ.): Կատարելով հետադարձ հաշվարկ ստացվել է 01.01.2014 թ-ի դրությամբ բաշխիչ աշտարակների գումարային հաշվիչների ցուցմունքը՝ 2681195 մ.խ.: Համաձայն բաշխիչ աշտարակների հաշվիչների ցուցմունքների հանրագումարի պարզվել է, որ ընկերությունը 2013 թ-ին իրացրել է 1657952 մ.խ. գազ, սակայն 2013 թ-ի համար հաշվարկներով ցույց է տվել իրացված գազի ծավալ 1510456 մ.խ.: Այսպիսով առաջանում է պակաս ցույց տրված գազի ծավալ 147496 մ.խ., որը գումարային արտահայտությամբ կկազմի 22.301.395 դրամ: Այսպիսով խախտվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները՝ ընկերությունը 2013 թ-ին գազի իրացումից հասույթը պակաս է ցույց տվել 18.584.496 դրամով: Արդյունքում հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները շահութահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 6.976.052 դրամ:

Վերոգրյալ խախտման համար Ակտի 4-րդ կետով լրացուցիչ պարտավորություններ են առաջադրվել նաև ԱԱՀ-ի գծով՝ ընդամենը 7.016.127 դրամի չափով:

Քննարկվող դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք ղեկավարվելով ՀՀ կառավարության 28.08.2008 թ-ի թիվ 1101-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի 6-րդ կետի 13-րդ ենթակետի դրույթներով, գազի իրացման ծավալների հաշվարկման համար հիմք են ընդունել բաշխիչ աշտարակների միջոցով փաստացի իրացված գազի ծավալների հանրագումարը: Մասնավորապես, հիմք ընդունելով Ընկերությանը պատկանող ԱԳԼՃԿ-ում Չափագիտության ազգային ինստիտուտի կողմից 15.04.2013 թ-ին և 07.04.2014 թ-ին թվով 4 բաշխիչ աշտարակներում կատարված ստուգաչափման արդյունքում բաշխիչ աշտարակների գումարային հաշիվների ցուցմունքները, հետհաշվարկների միջոցով, ըստ էության, անուղղակի եղանակով որոշվել են 01.01.2013 թ-ի և 01.01.2014 թ-ի դրությամբ բաշխիչ աշտարակների գումարային հաշվիչների ցուցմունքների հանրագումարը: Այնուհետև, 01.01.2013 թ-ի և 01.01.2014 թ-ի դրությամբ բաշխիչ աշտարակների գումարային հաշվիչների ցուցմունքների հանրագումարների տարբերությունը դիտվել է որպես ընկերության կողմից 2013 թ-ին իրացված գազի ծավալ, որը և համադրվել է ընկերության կողմից 2013 թ-ի համար հաշվարկներով ցույց տրված իրացված գազի ծավալի հետ: Նման համադրման արդյունքում արձանագրվել է 2013 թ-ի ընթացքում պակաս հաշվարկված գազի ծավալ, որի նկատմամբ լրացուցիչ հաշվարկվել են համապատասխան հարկային պարտավորություններ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն. «Եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային մարմին ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը կամ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները համարվում են չհիմնավորված ... , ապա հարկվող օբյեկտները և

հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»:

Տվյալ դեպքում ստուգման ակտով, ըստ էության, արձանագրվել է ընկերության կողմից հարկային մարմին ներկայացրած հաշվետվություններում ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելու դեպք: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետհաշվարկների միջոցով որոշված իրացված գազի ծավալները և դրանց նկատմամբ հաշվարկված հարկային պարտավորությունները չի կարող դիտվել որպես հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորություն, հետևապես Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ընկերության հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հարկային մարմնի կողմից պետք է հաշվարկվեին վերոգրյալ իրավանդումով սահմանված կարգով, ինչը, սակայն, չի կատարվել:

Բացի այդ, ընկերության ԱԳԼՃԿ-ի կողմից իրացվող գազը ստացվում է «Հայռուգազարդ» կազմակերպությունից և ստացված գազի ծավալներն արտացոլվում են կապարակնքված հաշվիչներում: Տվյալ դեպքում ստուգվող ժամանակահատվածում յուրաքանչյուր ամիս ստացված գազի վերաբերյալ հաշվիչի տվյալները համեմատվել են փաստացի իրացված գազի ծավալների հետ և տարբերություններ չեն հայտնաբերվել: Ըստ ստուգման ակտով արձանագրված տվյալների ստացվում է, որ ընկերությունը 2013 թ-ի ընթացքում ԱԳԼՃԿ-ում ավել գազ է վաճառել, քան ստացել է «Հայռուգազարդ» կազմակերպությունից, որի վերաբերյալ տվյալները, ինչպես որ վերը նշվեց, արտացոլվել են կապարակնքված հաշվիչով: Հանձնաժողովը գտնում է, որ նման բան, ըստ էության, իրականում հնարավոր չէ:

Հանձնաժողովը գտնում է նաև, որ եթե անգամ ընդունենք ակտով արձանագրված տվյալների արժանահավատ լինելը, ապա ստուգման ընթացքում պետք է մանրամասն ուսումնասիրվեին և բացահայտվեին ստացված և իրացված գազի վերոգրյալ հնարավոր տարբերությանը նպաստած հանգամանքները: Մասնավորապես, ընկերությունը պնդում է, որ ԱԳԼՃԿ-ի հանգույցները շահագործման ընթացքում կեղտոտվում են յուղային և մի շարք այլ թափոններով, որոնք պարբերաբար մաքրվում են կոմպրեսորով օդ մղելու միջոցով: Այդ աշխատանքները կատարվում են բաշխիչ աշտարակների բաշխման փողորակներով, որի արդյունքն արտացոլվում է ընդհանուր հաշվիչներում: Ընդ որում, նշված բոլոր գործողությունների ժամանակ չի խախտվում բաշխիչ աշտարակների հաշվիչների կնիքների ամբողջականությունը, իսկ հաշվառված ցուցմունքները չեն հանդիսանում մեքենաների լիցքավորում՝ իրացված գազի ծավալ:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ընկերության կողմից «Հայռուգազարդ» կազմակերպությունից ստացված գազի և հարկային տեսչություն ներկայացված գազի իրացման ծավալների միջև 2013 թ-ին առաջացած տարբերության պատճառները պարզելու նպատակով ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ 14.10.2014 թ-ի գրությամբ համապատասխան նյութեր են ուղարկվել ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչություն: Ստացված նյութերի շրջանակներում իրականացված համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ԱԳԼՃԿ-ի հանգույցները կոմպրեսորով օդ մղելու միջոցով մաքրվման աշխատանքները հնարավոր է իրականացնել առանց բաշխիչ աշտարակների հաշվիչների կնիքների ամբողջականությունը խախտելու:

Տվյալ դեպքում ստուգման ակտով համապատասխան հաշվարկները կատարելիս ստացված և իրացված գազի ծավալների միջև առաջացած տարբերությունը հաշվարկելիս, այն մաքրման աշխատանքների հետևանք հանդիսանալու հնարավորությունը, հաշվի չի առնվել:

Հարկ է նշել նաև, որ վերոգրյալ հաշվարկները կատարելիս հիմք է ընդունվել «ԹԵՄ-ԱՐՄ-ԿԱՐ» ՍՊԸ 12.09.2014 թ-ի գրությամբ Արմավիրի ՏՀՏ-ին հայտնված այն տեղեկությունը,

որի համաձայն 03.04.2014թ-ից մինչև 07.04.2014 թ-ն ընկած ժամանակահատվածում գազի մանրաձախ վաճառք չի իրականացվել, իսկ մեծածախ վաճառքի ծավալը կազմել է մոտ 4000 խ.մ.: Սակայն որևէ գործողություն, որը ուղղված կլիներ «ԹԵՄ-ԱՐՄ-ԿԱՐ» ՍՊԸ 12.09.2014թ-ի գրությամբ բերված տվյալների արժանահավատությունը ճշտելուն, ստուգումն իրականացնող անձանց կողմից չի իրականացվել:

Միաժամանակ, Հանձնաժողովը գտնում է նաև, որ եթե անգամ ընդունենք ակտով արձանագրված տվյալների արժանահավատ լինելը, ընկերությանը պատկանող ԱԳԼՃԿ-ում Չափագիտության ազգային ինստիտուտի կողմից 15.04.2013 թ-ին և 07.04.2014 թ-ին թվով 4 բաշխիչ աշտարակներում կատարված ստուգաչափման արդյունքում բաշխիչ աշտարակների գումարային հաշիվների ցուցմունքների հիման վրա հետհաշվարկների հիման վրա 01.01.2013 թ-ի և 01.01.2014 թ-ի դրությամբ բաշխիչ աշտարակների գումարային հաշիվների ցուցմունքներ ստանալու արդյունքում 01.01.2014 թ-իվ մինչև 07.04.2014 թ-ն ընկած ժամանակահատվածի տարբերությունը ևս վերագրվել է 2013 թ-ին, այնինչ այն վերաբերվում է միայն 2014 թ-ին և չէր կարող հաշվի առնվել ընկերության կողմից 2013 թ-ի իրացված գազի ծավալների հաշվարկներում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ քննարկվող դեպքում, ըստ էության, Ակտը կազմվել է վերը նշված իրավանորմով սահմանված պահանջների խախտմամբ, այն է՝ առանց սույն գործում առկա փաստական հանգամանքների բազմակողմանի քննարկման և բացահայտման կատարվել են եզրահանգումներ, որոնք, սակայն, չեն կարող հիմք հանդիսանալ լրացուցիչ պարտավորություններ հաշվարկելու համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ 17.02.2015 թ-ի թիվ 1010169 ակտի 1-ին և 4-րդ կետերը:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**